

CONTOURGLOBAL



Ն ա ի ա հ ա շ ի վ
Bill of Quantity

Document no.
Փաստաթղթի N

Sheet / էջ

1

-

2

Project
Նախագիծ

Drager ստուգաչափման կայան
Drager Bump Test Station

Անվտանգության
ինդեքս
Security Index

Title
Անվանում

Drager ստուգաչափման կայանի ձեռքբերում
Purchase of Drager Bump Test Station



00

10.03.2018

TR

N. Zalyan
Ն. Զալյան
N. Zalyan

V. Tokhsant
Վ. Թոխսանց
V. Tokhsant

A. Yolyan
Ա. Յոլյան
A. Yolyan

REV
Վերանայում

Date
Ամսաթիվ

Scope
Ծավալ

Prepared
Նախապատրաստել է

Checked
Ստուգել է

Approved
Հաստատել է

	Ն ա խ ա հ ա շ ի վ Bill of Quantity				
	Drager ստուգաչափման կայանի ձեռքբերում Purchase of Drager Bump Test Station	Sheet / էջ	2	-	2

1. Մատակարարման ծավալը

Scope of the supply

Սույն տեխնիկական բնութագրի առարկա հանդիսացող ապրանքների քանակն է՝	The following quantity of goods is the subject of this technical specification:
--	--

Նախահաշիվ / Bill of Quantity

ՀՀ / N.	Նկարագրություն Description	Չափի միավորը Measure unit	Քանակը Quantity	Միավորի գինը (ՀՀ դրամ) Unit price (AMD)	Ընդամենը Total
1.1	Drager ստուգաչափման կայան Drager Bump Test Station	հատ/ piece	1		

CONTOURGLOBAL



Տեխնիկական բնութագիր
Technical description

Document no.
Փաստաթղթի N

Sheet / էջ

1

-

12

Project
Նախագիծ

Drager ստուգաչափման կայան
Drager Bump Test Station

Security Index
Անվտանգության ինդեքս

Title
Անվանում

Drager ստուգաչափման կայանի ձեռքբերում
Purchase of Drager Bump Test Station



00

10.03.2018

TR

Ն. Զալյան
N. Zalyan

Վ. Թոխսանց
V. Tokhsant

Ա. Յոլյան
A. Yolyan

REV
Վերանայում

Date
Ամսաթիվ

Scope
Ծավալ

Prepared
Նախապատրաստել է

Checked
Ստուգել է

Approved
Հաստատել է

CONTOURGLOBAL 	<i>Տեխնիկական բնութագիր</i> <i>Technical description</i>				
	<i>Drager ստուգաչափման կայանի</i> <i>ձեռքբերում</i> <i>Purchase of Drager Bump Test Station</i>	Sheet / էջ	2	-	12

	<i>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</i>	<i>CONTENTS</i>
1.	Մատակարարման առարկան	Subject of the supply
2.	Մատակարարման տեխնիկական պահանջները	Technical requirements of the supply
3.	Մատակարարման ժամանակահատվածը	Timeframe of the supply
4.	Մատակարարման տեղը	Place of the supply
5.	“ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ” ՓԲԸ-ն մատչելիությունը	Availability of “ContourGlobal Hydro Cascade” CJSC
6.	Փաթեթավորում, պիտակավորում	Packaging and Labeling
7.	Ապրանքների ընդունումը պահեստում	Receiving goods in the warehouse
8.	Արձանագրություններ և հղումային փաստաթղթեր	Protocols and reference documents

1. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

SUBJECT OF THE SUPPLY

	Տվյալ մատակարարման առարկա են հանդիսանում հետևյալ սարքերը և նյութերը	The following equipment and materials are subject of the current supply
1.1	<i>Drager ստուգաչափման կայան</i>	<i>Drager Bump Test Station</i>

	Տեխնիկական բնութագիր Technical description				
	Drager ստուգաչափման կայանի ձեռքբերում Purchase of Drager Bump Test Station	Sheet / էջ	4	-	12

2. Մատակարարման տեխնիկական պահանջները

Technical requirements of the supply

2.1. Չափաբերման կայանի տեխնիկական պահանջները	2.1 Technical requirements of Bump Test Station																				
2.1.1 Drager ստուգաչափման կայան նախատեսված Drager X-am 2500-ի չափաբերման համար: Կայանը պետք է համալրված լինի չափաբերման համար անհրաժեշտ համակցված գազերով լիցքավորված բալոնով: <table border="1" data-bbox="252 1205 884 1429"> <thead> <tr> <th colspan="2">Գազերի բաղադրությունը և չափման միջակայք</th></tr> </thead> <tbody> <tr> <td>Ածխածնի օքսիդ (CO)</td><td>20-999 ppm</td></tr> <tr> <td>Ծծմբաջրածին (H₂S)</td><td>0-99 ppm</td></tr> <tr> <td>Թթվածնի (O₂)</td><td>0-25 % Vol</td></tr> <tr> <td>Պայթուկալիտանգ գազեր (CH₄)</td><td>40-100% LEL</td></tr> </tbody> </table>	Գազերի բաղադրությունը և չափման միջակայք		Ածխածնի օքսիդ (CO)	20-999 ppm	Ծծմբաջրածին (H ₂ S)	0-99 ppm	Թթվածնի (O ₂)	0-25 % Vol	Պայթուկալիտանգ գազեր (CH ₄)	40-100% LEL	Drager Bump Test Station is designed for Drager X-am 2500 calibration. The bump test station should be equipped with combined gas-filled cylinder required for calibration. <table border="1" data-bbox="916 1218 1548 1442"> <thead> <tr> <th colspan="2">Gas composition and measurement range</th></tr> </thead> <tbody> <tr> <td>Carbon monoxide (CO)</td><td>20-999 ppm</td></tr> <tr> <td>Hydrogen sulphide (H₂S)</td><td>0-99 ppm</td></tr> <tr> <td>Oxygen (O₂)</td><td>0-25 % Vol</td></tr> <tr> <td>Explosive gases (Methane CH₄)</td><td>40-100% LEL</td></tr> </tbody> </table>	Gas composition and measurement range		Carbon monoxide (CO)	20-999 ppm	Hydrogen sulphide (H ₂ S)	0-99 ppm	Oxygen (O ₂)	0-25 % Vol	Explosive gases (Methane CH ₄)	40-100% LEL
Գազերի բաղադրությունը և չափման միջակայք																					
Ածխածնի օքսիդ (CO)	20-999 ppm																				
Ծծմբաջրածին (H ₂ S)	0-99 ppm																				
Թթվածնի (O ₂)	0-25 % Vol																				
Պայթուկալիտանգ գազեր (CH ₄)	40-100% LEL																				
Gas composition and measurement range																					
Carbon monoxide (CO)	20-999 ppm																				
Hydrogen sulphide (H ₂ S)	0-99 ppm																				
Oxygen (O ₂)	0-25 % Vol																				
Explosive gases (Methane CH ₄)	40-100% LEL																				

CONTOURGLOBAL 	<i>Տեխնիկական բնութագիր</i> <i>Technical description</i>				
	<i>Drager ստուգաչափման կայանի ձեռքբերում</i> <i>Purchase of Drager Bump Test Station</i>	Sheet / էջ	6	-	12

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

TIME OF SUPPLY

3.1 Մատակարարումը պետք է կատարվի 45 օրվա ընթացքում	3.1 The supply should be carried out within 45 days
--	---

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵՂԸ

PLACE OF SUPPLY

“ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ” ՓԲԸ-ն պահեստը (ընդունման կետ) գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում, Գր. Տաթևացի 2 հասցեում”	The warehouse of ContourGlobal Hydro Cascade CJSC (point of acceptance) is located in the city of Goris in Syunik Region, at 2 Grigor Tatevaci str.
--	--

4. ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՀԵՏԵՎԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

SUPPLIERS SHOULD FOLLOW THE FOLLOWING RULES

- Պահեստի աշխատանքային ժամերն են ամեն օր երկուշաբթիից ուրբաթ ժամը 9 ⁰⁰ -ից մինչև 16 ⁴⁵ տեղական ժամանակով:	- Working hours of the warehouse are from 9am to 16:45 local time every day from Monday to Friday.
- Իր առաքման փաստաթղթերով, կամ մատակարարվող փոքր ծավալի ապրանքներով անձը կարող է մոտենալ վարչական շենքի գլխավոր մուտքից և ստանալ ժամանակավոր անձնագիր մուտք գործելու վարչական շենք և պահեստ: Այդ ընթացքում նրան կուղեկցի պատվիրատուի ներկայացուցիչը:	- Together with delivery documents, or small size supply goods, the person can approach the main entrance of the administrative building and obtain a temporary pass to enter the administrative building and warehouse. During this period the Contractor representative will accompany him.
- Ավտովարորդները, որոնք տեղափոխում են ցնցող, դյուրավառ և այլ նմանատիպ նյութեր,	- Drivers who are transporting jolty, flammable and other similar material, are

պարտավոր են համապատասխան ցուցանակ տեղադրել թափքի վրա:	obliged to install a relevant sign on the car body.
- Ավտոմեքենաների կայանումը վարչական շենքի տարածքում չպետք է խոչընդոտ ստեղծի այլ տրանսպորտային միջոցների համար (հրդեհային, շտապօգնություն և այլն):	- Parking in the area of the administrative building should not create obstacles for other transportation means (for example firefighting, ambulance, etc).
- Մատակարարը առաքման գործընթացը ավարտելուց հետո անհապաղ պետք է լքի պատվիրատուի տարածքը:	- The supplier should immediately leave the Contractor's location after finishing the delivery activities.
- Բացարձակապես արգելվում է, բացի մատակարարվող ապրանքներից պատվիրատուի տարածք բերել ցանկացած այլ ապրանք: Խստիվ արգելվում է բերել կամ օգտագործել ալկոհոլային, հոգեմետ, թմրամիջոց և այլ նմանատիպ նյութեր:	- Other than the supplied goods, it is strictly forbidden to bring any other material to the site of the Contracting Authority and use it, for example alcohol, tranquilizers, drugs or other similar substances.

5. ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄ

PACKAGING AND LABELLING

- Մատակարարվող բոլոր ապրանքները և սարքավորումները պետք է լինեն գործարանային փաթեթավորված պիտակներով կամ հավաքված համաձայն անվտանգ տրանսպորտային և պահպանման կանոնների ըստ նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների:	- All the supplied goods should be have factory packaging labels or assembled in accordance with the rules for safe transportation and storage of materials, according to their physicochemical properties.
- Ապրանքների պիտակավորումը նպատակ ունի տալ տեղեկություն ապրանքների պահպանության ընթացքում նրանց ազդեցության մասին, առողջության պաշտպանության և ապրանքի անվտանգ պահպանության մասին: Այդ տեղեկությունները կարող են տրամադրվել ինչպես ապրանքի ծագման և արտադրության եղանակների միջոցով: Որոշ քիմիկատներ ունեն հատուկ պահպանման պայմաններ: Պիտակները պետք է տան ամբողջական տեղեկություն ապրանքների անվտանգ օգտագործման և հատուկ միջոցների օգտագործման վերաբերյալ, խուսափելով միջավայրի աղտոտումից, ինչպես նաև	- Product labeling aims to give information about impact effects of their products during the preservation, health protection and safe guarding of the product. This information can be obtained based on the product origin and manufacturing methods. Some chemicals have special storage conditions. Labels should give full information on the safe usage of the products and special measures to be taken to prevent pollution of the environment, as well as packaging should provide protection for vibration, shock sensitivity, moisture, etc. Safety and protection should be evaluated and ensured

փաթեթավորման պաշտպանությունը թրթռումներից, զգայուն հարվածից, խոնավությունից և այլն: Մինչև զգայուն նյութերի և ապրանքների բաշխումը պետք է գնահատվի և ապահովվի նրանց անվտանգ պաշտպանությունը:	prior to the distribution of sensitive materials and products.
---	---

6. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՊԱՇԵՍՈՒՄ / RECEIVING GOODS IN THE WAREHOUSE

Ապրանքների յուրաքանչյուր առաքում ստացվում է վարչական շենքի տարածքում տեղակայված պահեստում Պահեստի մասնագետի կողմից առանց ընդունվելու: Պահեստի մասնագետը ստորագրում է առաքումն ուղեկցող բեռնագիրը: Ստորագրված փաստաթղթի մեկ օրինակը մնում է Պահեստի մասնագետի մոտ, առնվազն մեկ օրինակ մնում է մատակարարի մոտ: Ապրանքները ընդունվում են պահեստում պահեստի մասնագետի կողմից լրացված ստանդարտ ձևի ընդունման ակտի հիման վրա:	Each supply of goods is received in the warehouse located in the area of the administrative building without being accepted by the store man. The store man signs the waybill accompanying the supply. One copy of the signed document remains with the storeman. At least one copy of the documents remains with the supplier. Goods are received in the warehouse based on the Acceptance Protocol standard form filled in by the storeman.
Եթե հայտնաբերվում են անհամապատասխա- նությունները պատվիրված և առաքված ապրանքների միջև, ապա պետք է հետևել ստորև բերված ընթացակարգերին: Այս անհամապատասխանությունը պետք է հաստատվի ապրանքներն ընդունող պահեստի և մատակարարի կողմից: Այն պարագայում, եթե դրանք հանդիսանում են փաստաթղթերի կամ համակարգում ներմուծված տվյալների սխալ, ապա փաստաթղթերը պետք է ուղղվեն, իսկ տվյալները փոխվեն:	If there are discrepancies between ordered and supplied products, then they should follow below mentioned procedures. This discrepancy must be approved both by the warehouse receiving goods and the supplier. Whereas, if these discrepancies are due to mistakes in documents or incorrect data inserted in the system, then the documentation should be corrected and details changed.
Այն դեպքում, երբ առաքման պակասը հաստատվում է, բացակայող միավորները պետք է լրացուցիչ առաքվեն կամ եթե դրանք անհրաժեշտ չեն, պետք է հանվեն Գնման պատվերից: Երկու դեպքում է պետք է տեղեկացվի, թե արդյոք բացակայող ապրանքները պետք է առաքվեն	In case if the supply shortage is confirmed, missing units should be delivered, or if they are not needed, shall be deducted from the purchase order. In both cases, it should be informed whether missing goods must be delivered in order to complete the order, or whether it is necessary to issue credit aviso for

Պատվերը կատարելու նպատակով, թե անհրաժեշտ է թողարկել կրեդիտային ավիզո պատվերը նվազեցնելու համար: Առաքման տեղեկատվությունը պետք է թարմացվի համապատասխան ուղղումներով:	reducing the order. Supply information should be updated with amendments.
Այն պարագայում, եթե Կապալառու կազմակերպության կողմից հաստատված առաքված և պատվիրված քանակությունների միջև հայտնաբերվում է անհամապատասխանություն, Գնման պատվերը թարմացվում է արտացոլելով փաստացի առաքված քանակությունները: Այլ պարագայում, առաքումը կամ հաշիվ-ապրանքագիրը մերժվում են մինչև որ Մատակարարը չկարողանա բավարարել Գնման պատվերի պահանջները:	In case if discrepancies are found in the quantities of ordered and supplied goods approved by the Contractor, the purchase order should be updated to reflect the actual quantity of the supplied goods. Otherwise, delivery or invoice are being rejected, till the supplier meets requirements of the purchase order.
Այն դեպքում, եթե Մատակարարի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագիրը չի համընկնում Գնման պատվերում բերված քանակի կամ գումարի հետ, Մատակարարը ներկայացնում է գնման պատվերի ճշգրիտ տեղեկատվություն պարունակող նոր հաշիվ-ապրանքագիրը:	In case, when the supplier's invoice does not match the number or amount reflected in the purchase order, the Suppliers issues credit aviso for the wrong document and presents a new invoice, reflecting accurate information of purchase order.

7. ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

PROTOCOLS AND REFERENCE PAPERS

7.1. Մատակարարվող ապրանքները պետք է ուղեկցվեն հետևյալ փաստաթղթերով	8.2. Supplied goods should be accompanied by the following documents
- Հանձնման – ընդունման արձանագրություն - Մատակարարի կողմից տրված որակի սերտիֆիկատ - Երաշխիքային քարտ (նվազագույնը 12 ամիս) - Շահագործման հրահանգներ (ըստ անհրաժեշտության) - Փաթեթավորման թերթ կամ այլ ցուցակ	- Acceptance protocol - Quality certificate given by the supplier - Warranty (at least 12 months) - Instructions for use (if necessary) - Packaging paper or other list

* Սույն տեխնիկական բնութագրում թարգմանության անհամապատասխանությունների դեպքում առավելությունը տրվում է հայերեն լեզվով գրվածին:

* In case of discrepancies related to the translation of this technical specification, the Armenian version shall

<Քոնթուրզլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր


<Քոնթուրզլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի կարիքների համար Դրագեր(Drager)
ստուգաչափման կայանի ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի, (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ Դրագեր(Drager) ստուգաչափման կայանի ձեռքբերման նպատակով 203/18 եզակի հղման համարով անցկացվող մրցույթի ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի գնումների բաժնի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ erik.mughumyan@contourglobal.com



ՄԱՍ Ի.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հայտը ներկայացնելու կարգը
4. Հայտերի/առաջարկների բացումը և գնահատման կարգը
5. Պայմանագրի կնքումը
6. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

ՄԱՍ I


1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում <Քննությունը հիդրոկասկադ> ՓԲԸ-ի կարիքների համար՝ Դրագեր(Drager) ստուգաչափման կայանի ձեռքբերումը:

Չափաբաժի նների համարը	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ
1	Դրագեր(Drager) ստուգաչափման կայան	հատ	1

Դրագեր(Drager) ստուգաչափման կայանի ձեռքբերման տեխնիկական բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի ՄԱՍ 2:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ



2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.


5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված գրավոր հայտարարություն:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:



1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

2.5 Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում է գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին: Կից ներկայացնելով վերջին մեկ տարվա ընթացքում կատարված առնվազն մեկ պայամանագիր:

2) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում է գնահատվում է հետևյալ կարգով՝


ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին:

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

3) «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում է գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին: Կից ներկայացնել նախորդ տարվա հաշվեկշռի 1-ին և 2-րդ ձևերը, Շահութահարկի հաշվարկը, ինչպես նաև տեղեկատվություն հայտի ներկայացման օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: (տեղեկանք հարկային տեսչությունից):

4) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում է գնահատվում է հետևյալ կարգով՝



ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին: Մասնակիցը՝ որսյես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված աշխատողների անձնագրերի պատճենները, Աշխատանքային պայմանագրեր պատճենները:

3. ՀԱՅՏՀ ՆԵՐԿԱՅԱԳՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում:

Հայտը/տեխնիկական առաջարկը/ ներկայացվում է փաստաթղթային ձևով: Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից/ ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճեն>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:


3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) Մրցութային ընթացակարգի ծածկագիրը.

գ) <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը



3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է:

3.4 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

4) իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:


5) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

6) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիստոն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

4. ՀԱՅՏԵՐԻ/ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ 2018թ Հունիսի 25-ը, ժամը՝ <<10:00>>-ին, ք. Գորիս Գր. Տաթևացու 2 հասցեում:

4.2. Առաջարկի ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո հանձնաժողովը հավաքվում և բացում է բոլոր ներկայացված առաջարկները: Առաջարկները ներկայացրած ընկերությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի կողմից առաջարկները բացելու պահին Հանձնաժողովը ուսումնասիրում և գնահատում է ներկայացված տեխնիկական առաջարկները, որից հետո հաստատում կամ մերժում է դրանց համապատասխանությունը տեխնիկական պահանջներին, ներառյալ առաքման ժամը և երաշխիքային պայմանները: Այն պարագայում, եթե ներկայացված փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ որոշել առաջարկի համապատասխանությունը, գնումների բաժինը թեկնածուին խնդրում




է ներկայացնել հավելյալ մանրամասներ և ապացույցներ:

Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց և հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ծանուցում է տնտեսական առաջարկների բանակցման գործընթացում ներկայացնելու գնային առաջարկներ՝ էլեկտրոնային եղանակով: Համակարգը կառավարող կամ գործընթացի դիտորդ հանդիսացող անձը կարող է տեսնել առաջարկված գները միայն առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո: Առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո դրանք դասակարգվում են ըստ գնի: Գնային առաջարկների բանակցությունների երկրորդ փուլը կարող է մեկնարկել բոլոր մասնակիցներին պատշաճ կերպով տեղեկացնելուց և նրանցից երկրորդ փուլում մասնակցելու վերաբերյալ գրավոր հաստատում ստանալուց հետո: Այս փուլում Առաջին փուլի (Սկզբնական առաջարկ) ամենացածր առաջարկված գինը հայտարարվում է բոլոր մասնակիցներին՝ առանց տրամադրելու որևէ տեղեկություն այդ գինն առաջարկած մասնակցի մասին: Մասնակիցները կարող են առաջարկել ներկայացված գնից ավելի ցածր գին նախօրոք սահմանված ժամկետներում: Առավել ցածր ողջամիտ գին առաջարկած մասնակիցը հանձնաժողովի որոշմամբ ճանաչվում է ընտրված մասնակից/ հաղթող: 5 օրվա ընթացքում մրցույթի բոլոր մասնակիցները պաշտոնապես տեղեկացվում են առաջարկների դասակարգման և Մատակարարի ընտրության մասին: Պայմանագիրը ուղարկվում է ընտրված Մատակարարին

ստորագրման համար:

Մրցույթին վերաբերող ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը արխիվացվում են և կցվում են Գնման պատվերին/Պայմանագրին:



5.1 Գնահատող հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

6.1 Նախքան պայմանագիր կնքելը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հաստատում է, որ սեփական բիզնեսը և ներքին հարաբերությունները կազմակերպելու ժամանակ՝ Պատվիրատուն և Կապալառուն առաջնորդվում են Պատվիրատուի Հակակոռուպցիոն քաղաքականություն (հավելված 5), Մատակարարի վարվեցողության կանոնագիրք (հավելված 6) և Վաճարողի հավաստագրում – պատժամիջոցների մասին օրենսդրության պահանջներ (Հավելված 7) քաղաքականություններին: Վերոնշյալ արձանագրությունները կազմում են պայմանագրի անբաժանելի մաս և կցվում են:

8.2 <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Ընտրված մանակցի հետ կնքվում է Պայմանագիր <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի համապատասխան, ընտրված մասնակցին մրցույթի արձանագրության ծանուցումից 20 (քսան) օրացույցային օրվա ընթացքում:

